ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 82/4

10-ը հուլիսի 2025 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգը հաստատելու, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020թ.-ի փետրվարի 22-ի թիվ 43 նիստում 43/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման բաժնի կանոնադրությունը, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019թ.-ի հունվարի 26-ի թիվ 35 նիստում 35/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հաշվապահության կանոնադրությու կանոնադրությունը, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019թ.-ի հունվարի 26-ի թիվ 35 նիստում 35/4 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժնի կանոնադրությունը, ուժը կորցրած ճանաչել մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգը համաձայն հավելվածի,
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020թ.-ի փետրվարի 22-ի թիվ 43 նիստում 43/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման բաժնի կանոնադրությունը,
3. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019թ.-ի հունվարի 26-ի թիվ 35 նիստում 35/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հաշվապահության կանոնադրությու կանոնադրությունը,
4. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019թ.-ի հունվարի 26-ի թիվ 35 նիստում 35/4 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժնի կանոնադրությունը,
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2025թ. հուլիսի 10-ի նիստի թիվ 82/4 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Մ.Մ. Օթարյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժինը (այսուհետև՝ ՖՌԿ բաժին կամ Բաժին) ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանում է:

1.2 ՖՌԿ բաժինը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ԵՊՀ կանոնադրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոնակարգով, ինչպես նաև հաշվապահության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

1.3 Բաժինը սահմանված կարգով կարող է ունենալ իր անվամբ պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. ՖՌԿ բաժնի խնդիրներն են.

2.1.1. Մասնաճյուղի ֆինանսների արդյունավետ կառավարումը,

2.1.2. Մասնաճյուղի ֆինանսական կայունության ապահովումը:

2.2. ՖՌԿ բաժնի գործառույթներն են.

2.2.1. ԵՊՀ ԻՄ հաշվապահական հաշվառման կազմակերպումը,

2.2.2. ԵՊՀ ԻՄ հաշվապահական, հարկային և վիճակագրական հաշվետվությունների կազմումը և ներկայացումը համապատասխան մարմիններին,

2.2.3. ԵՊՀ ԻՄ գույքի առկայության և շարժի, նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

2.2.4. ԵՊՀ ԻՄ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կազմումը,

2.2.5. գնման գործընթացի կազմակերպումը «Գնումների մասին» օրենքի պահանջներին համապատասխան և կնքված պայմանագրերի շրջանակներում ձեռքբերումների ապահովման վերահսկումը,

2.2.6. դեբիտորների ն կրեդիտորների հետ փոխադարձ հաշվարկների վարումը,

2.2.7. ԵՊՀ ԻՄ դրամական միջոցների, ապրանքանյութական արժեքների և ֆինանսական պարտավորությունների գույքագրման գործընթացին մասնակցությունը ն գույքագրման արդյունքների ամփոփումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.2.8. աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի հիման վրա, ամսական աշխատավարձերի հաշվարկների կատարումը, ինչպես նաև անաշխատունակության և այլ նպաստների ու վճարների հաշվարկումը և վճարումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.2.9. ստացված ծառայությունների, ապրանքների, կատարված աշխատանքների համար վճարումների կատարումը համապատասխան փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, հարկերի և այլ պարտադիր վճարների կատարումը,

2.2.10. ուսման վարձավճարների հաշվառումը և մուտքագրումը ՀԾ համակարգ, պարտքերի հաշվեգրումը,

2.2.11. ըստ անհրաժեշտության ուսման վարձավճարների, դեբիտորական ն կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը Մասնաճյուղի տնօրենին և համապատասխան ստորաբաժանումներին,

2.2.12. պետության և ԵՊՀ ԻՄ կողմից տրամադրված ուսման վարձավճարների զեղչերի հաշվառումը,

2.2.13. պետության, ԵՊՀ ԻՄ, հիմնադրամների և այլ բարեգործական կազմակերպությունների կողմից ստացված կրթաթոշակների հաշվառումը և վճարումը,

2.2.14. ուսման վարձավճարների փոխանցման հաշիվների տրամադրումը ըստ պահանջի,

2.2.15. ԿԳՄՍ նախարարություն ներկայացվող հաշվետվությունների կազմումը ըստ նպատակային ֆինանսավորման ուղղությունների, ինչպես նաև, ըստ պահանջի, ԿԳՄՍ նախարարություն և պետական այլ մարմիններ ներկայացվող տեղեկատվության կազմումը և տրամադրումը,

2.2.16. ԵՊՀ ԻՄ տարեկան աուդիտի իրականացման գործընթացին մասնակցությունը և պահանջված ֆինանսական տեղեկատվության տրամադրումը,

2.2.17. ֆինանսական տվյալների տրամադրումը տնօրենին՝ ԵՊՀ ԻՄ տարեկան և այլ հաշվետվությունների կազմման նպատակով,

2.2.18. Մասնաճյուղի այլ ստորաբաժանումներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը։

3. ՖՌԿ ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 ԵՊՀ ԻՄ ՖՌԿ բաժնի կառուցվածքը որոշվում է բաժնի հաստիքացուցակի հիման վրա, որի հաստատման և նրանում փոփոխությունների մասին որոշումներն ընդունում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրուրդը՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի և ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ:

3.2 ՖՌԿ բաժինը ղեկավարում է գլխավոր հաշվապահը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ԻՄ տնօրենը:

3.3 Գլխավոր հաշվապահը՝

3.3.1. կազմակերպում և վերահսկում է հաշվապահական գործունեությունը, ապահովում է հաշվապահության հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները,

3.3.2. աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ հաշվապահության փոխգործակցությունը,

3.3.3. կատարում է աշխատանքի բաժանում ՖՌԿ բաժնի աշխատողների միջև,

3.3.4. ներկայացնում է բաժինը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, բաժնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

3.3.5. կազմում և ներկայացնում է ֆինանսական, հարկային և այլ հաշվետվություններ,

3.3.6. պատասխանատվություն է կրում ՖՌԿ բաժնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և ՖՌԿ բաժնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար,

3.3.7. լուծում է սույն կանոնակարգից բխող և ՖՌԿ բաժնի գործունեության հետ կապված այլ հարցեր:

3.4 Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է ԵՊՀ ԻՄ բոլոր աշխատողների համար:

3.5 ՖՌԿ բաժնի աշխատողների աշխատանքային պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով, ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրով, ներքին իրավական ակտերով և գլխավոր հաշվապահի հանձնարարականներով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:

4.2 Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: